ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 սեպտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

135
(2801)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԺ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԸ

Երկար ջարչրկված Հռոմի կանոնադրության վավերացման նախագիծը՝ Հռոմի ստատուտը, այսօր վերջապես կքննարկվի ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում: Համաձայնագրի վավերացումը նախատեսում է պարզ ընթացակարգ, ինչպես սովորական նախագծերի, համաձայնագրերի համար է. նախ՝ գլխադասային հանձնաժողովում կքննարկվի, այս դեպքում՝ Պետաիրավական, այնուհետեւ՝ դրական եզրակացություն ստանալուց հետո, հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում այն արդեն կմտնի ԱԺ լիագումար նիստերի օրակարգ: ԱԺ-ում Հռոմի կանոնադրության վավերացման նախագիծը պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխանականները, չնայած բազմաթիվ քննադատություններին, մտադիր են գալ ու միաձայն կողմ քվեարկել նախագծին: Հայաստանը Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը ստորագրել էր դեռեւս 1999թ.-ի հոկտեմբերի 1-ին, սակայն չէր վավերացրել այն: Գործընթացն ընդհատվել էր 2004թ.-ի օգոստոսի 13-ին, երբ փաստաթուղթը ճանաչվել էր ՀՀ Սահմանադրությանը հակասող, սակայն Նիկոլ Փաշինյանի կառավարությունը որոշեց վերսկսել միջազգային պայմանագրի վավերացման գործընթացն ու այդ նպատակով կրկին դիմեց ՍԴ: ՀՀ սահմանադրական դատարանը մարտի 24-ին որոշեց, որ Հայաստանի միացումը միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը համապատասխանում է գործող Սահմանադրությանը: Փաստաթղթին միանալու դեպքում, ենթադրվում է, որ Հայաստան այցի դեպքում Վլադիմիր Պուտինը պետք է ձերբակալվի: Հաագայի միջազգային քրեական դատարանը այս տարի՝ մարտ ամսին, Ռուսաստանի նախագահ Պուտինի ձերբակալության միջազգային օրդեր էր տվել, ուստի ենթադրվում է, որ Հռոմի կանոնադրությունը վավերացրած եւ դատարանի իրավազորությունը ճանաչած պետությունները Վլադիմիր Պուտինին ձերբակալելու պարտավորություն ունեն: Ստացվում է՝ Հայաստանն էլ, միանալով այս փաստաթղթին, պարտավորվում է կատարել միջազգային դատարանի այս որոշումը. հենց Պուտինը մեր երկիր մտնի, կձերբակալեն: Հայաստանի այս քայլը Ռուսաստանը պաշտոնապես որակել էր ոչ բարեկամական իրենց նկատմամբ: Չնայած դժգոհություններին՝ իշխանականներն էլ պնդում են, թե Հռոմի ստատուտը վավերացնում են, որպեսզի կարողանան միջազգային բարձր ատյաններում Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցների հասնել:

Հոկտեմբերի 5-ին Գրանադայում նախատեսված է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը: Այդ մասին պարզ դարձավ սեպտեմբերի 24-ին, երբ հայտարարվեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի՝ Բրյուսել մեկնելու մասին: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ սեպտեմբերի 26-ին նա հանդիպել է Ադրբեջանի նախագահի օգնական Հ. Հաջիեւի հետ՝ նախապատրաստելու այդ հանդիպումը: Հանդիպումը մասնակիցներին հնարավորություն տվեց նաեւ կարծիքներ փոխանակել Եվրոպական քաղաքական համայնքի երրորդ գագաթնաժողովի շրջանակում ղեկավարների հնարավոր հանդիպման վերաբերյալ, որը նախատեսված է 2023 թվականի հոկտեմբերի 5-ին Գրանադայում: Եվ, ահա, այդ հանդիպման ժամանակ նշվել է, որ Հայաստանը եւ Ադրբեջանը շահագրգռված են օգտագործելու Գրանադայի հնարավոր հանդիպումը՝ շարունակելու հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերը: Սպասվում է, որ հոկտեմբերի 5-ին տեղի ունենալիք հանդիպմանը քննարկվելու են սահմանների սահմանազատմանը, անվտանգությանը, հաղորդակցություններին, հումանիտար հարցերին եւ խաղաղության պայմանագրին վերաբերող հարցեր: Ավելին՝ նշվում է, թե անհրաժեշտ են հստակ գործողություններ եւ վճռական փոխզիջումային լուծումներ՝ կարգավորման գործընթացի բոլոր ուղղություններով: Այսինքն՝ հոկտեմբերի 5-ին ղեկավարների սպասվող հանդիպմանը կարող են լուրջ որոշումներ ընդունվել:

ՀՀ նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանի ինքնասպանության գործը թեեւ վերաբացված է, սակայն դեպքից 4 տարի անց՝ մինչ օրս, հայտնի չէ, թե ով կամ ովքեր նախկին ոստիկանապետին հասցրին ինքնասպանության: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ քննչական կոմիտե, որտեղից ի պատասխան հայտնեցին, որ նախաքննությունը շարունակվում է: Հիշեցնենք, որ 2019 թվականի սեպտեմբերի 24-ին Բջնիի առանձնատանը հայտնաբերվել էր 2003-2008 թվականներին Հայաստանի ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Հայկ Հարությունյանի դին՝ գլխի շրջանում հրազենային վնասվածքով: Գրել էինք նաեւ, որ ՀՀ նախկին ոստիկանապետ, «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Հայկ Հարությունյանի ինքնասպանության գործով հարցաքննվել է նաեւ ՀՀ նախկին փոխոստիկանապետ, գեներալ-լեյտենանտ Արարատ Մահտեսյանը: 2021 թվականին գործը կասեցվեց, սակայն 2022 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը հստակ սահմանեց, որ կամ քրեական վարույթը կարճվում է, կամ որեւէ մեկի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում եւ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվում: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը այլեւս չբացահայտված քրեական վարույթների կասեցման իրավական ընթացակարգ չի նախատեսում: Եթե նախկինում քննիչները քրեական գործերը կասեցնում էին ու տարիներով գցում իրենց «սեյֆերը», ապա հիմա պետք է քննությունը շարունակեն: Ստացվում է՝ նախկին ոստիկանապետի մահվան գործը բացված է, բայց ոչինչ բացահայտված չէ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ սեպտեմբերի 26-ին ԱԱԾ մեկուսարանից ազատ է արձակվել ՀՀ երրորդ նախագահի անվտանգության նախկին պետ Վաչագան Ղազարյանը: Մեզ հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեն միջնորդություն չի ներկայացրել դատարան նրա կալանքը երկարացնելու վերաբերյալ, սեպտեմբերի 26-ին նրա կալանքի ժամկետը լրացել է, ու նա ազատ է արձակվել: Հիշեցնենք, որ նրան կալանավորել էին ՊՆ հողատարածքների ապօրինի վաճառքի գործով: Ըստ էության, պարզ է, թե որն է Վաչագան Ղազարյանի ազատության գինը: Այս տարվա օգոստոսի 31-ին դատախազությունը հայտնեց, որ «Եռաբլուր» պանթեոնի 4 միավոր հողատարածքները վերադարձրեց Հայաստանի Հանրապետությանը. «Գլխավոր դատախազության մասնակի հաշտության համաձայնությունը հաստատվեց դատարանի կողմից: 2020 թվականի հոկտեմբերի 20-ին Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսվել էր ՀՀ երրորդ նախագահի անվտանգության նախկին պետ Վաչագան Ղազարյանի եւ նրան փոխկապակցված անձանց պատկանող գույքի վերաբերյալ ուսումնասիրությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքում Գլխավոր դատախազությունը 2022 թվականի մայիսի 31-ին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան էր ներկայացրել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում՝ պահանջելով Վաչագան Ղազարյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել օրինական եկամուտներով չհիմնավորվող շուրջ 1 մլրդ 647 մլն դրամ եւ 7 մլրդ դրամ շուկայական արժեքով գույք: 2023 թվականի օգոստոսի 22-ին Վաչագան Ղազարյանի եւ նրան փոխկապակցված անձանց կողմից Գլխավոր դատախազություն էր ներկայացվել հայցապահանջը մասնակի ընդունելու եւ հայցապահանջում ներառված՝ «Եռաբլուր» զինվորական պանթեոնի 4 միավոր անշարժ գույքերը Հայաստանի Հանրապետության սեփականությանը փոխանցելու վերաբերյալ դիմում: Դիմումի հիման վրա՝ ՀՀ գլխավոր դատախազության եւ դիմում ներկայացրած անձանց միջեւ 2023 թվականի օգոստոսի 22-ին կնքվել է հաշտության համաձայնություն, որը նույն օրը ներկայացվել է Հակակոռուպցիոն դատարան՝ օրենքով սահմանված կարգով հաստատելու նպատակով»:

ԶՐՈՒՅՑ

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի լրագրողները Գորիսում էին: Այնտեղ են գտնվում Արցախից տեղահանված արցախցիները:

Մեր թղթակիցը Գորիսում զրուցել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանի հետ:

-Տիկին Գրիգորյան, Գորիսում շփվում եք տեղահանված քաղաքացիների հետ, ի՞նչ կասեք ստեղծված իրավիճակի մասին:

-Սա, առհասարակ, պատմական ողբերգություն է, երբ մարդիկ, մեր հայրենակիցները էթնիկ զտման եւ ցեղասպանության են ենթարկվել: Այնինչ, մենք տարիներ շարունակ բազմիցս ենք հնչեցրել եւ հիմա մեր աչքով ենք տեսնում. սա ուղղակի ուղեղի մեջ չտեղավորվող իրողություն է: Մենք եղանք Կոռնիձորում, տեսանք առաջին տեղահանվածներին, մարդիկ անորոշության մեջ են, մարդիկ իրենց տունն են թողել, գերեզմանոցները: Այսինքն՝ ինչ ունեին-չունեին, թողել են, մի տոպրակով վեր են կացել եկել են, հատկապես՝ Մարտունիի եւ Մարտակերտի շրջանի բնակիչները: Երեխաները մի սովորական բլուզով ճանապարհ են ընկել, մազապուրծ են եղել: Մարդիկ անորոշության մեջ են. մի մասին առաջարկում են Գորիսում մնալ, Կապան, Սիսիան, Սյունիքի մարզում, բայց նրանք, շատ լավ հասկանալով, թե ինչ քաղաքականություն է վարվել Արցախի նկատմամբ, հասկանում են, որ կարող է հաջորդ թիրախը Սյունիքը լինել, նրանք փնտրում են այլ մարզեր կամ Երեւան են նախընտրում: Նրանց այդ պատկերացումներն էլ հասկանալի են, նրանց այս իրավիճակն էլ հասկանալի է, անորոշության մեջ են, երեխաների բուժօգնությունը, կրթությունը... Սա իսկապես հումանիտար աղետ է, որին մենք փաստացի առնչվում ենք այս պահին:

-Տիկին Գրիգորյան, ռազմական փորձագետներ կան, որ տեսակետ են հնչեցնում, թե վտանգը կախված է նաեւ Սյունիքում: Դուք սյունեցի եք, այս մասով ի՞նչ կարող եք ասել՝ հաշվի առնելով նաեւ, որ օրեր առաջ տեղի ունեցավ Ադրբեջանի եւ Թուրքիայի նախագահների հանդիպումը, եւ, ըստ պաշտոնական հայտարարության, քննարկել են, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքի հարցը:

-Նոյեմբերի 9-ից հետո նման խոսույթ դիվանագիտական լեզվում սկսեցին շրջանառել տարբեր հարթակներում, եւ Էրդողանը շատ հստակ խոսում էր, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքի մասին, եւ Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի թշնամի հանդիսացող կառավարությունն ասում էր՝ նման բան գոյություն չունի, բոլոր ռիսկերը չեզոքացված են եւ այլն, բայց այսօր էլ Էրդողանը հերթական անգամ հայտարարել է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը շատ մոտ եւ տեսանելի է, եւ դրա համար պետք է խիզախություն ունենա Փաշինյանը եւ անի այն, ինչ խոսք է տվել: Ենթադրաբար խոսքը Զանգեզուրի միջանցքի մասին է: Ամեն դեպքում, կա նման կոնսենսուս թուրքական աշխարհում, որ այդ միջանցքը բացվի, եւ դա այն է, ինչ Նիկոլ Փաշինյանը ժամանակին խոսք է տվել: Այստեղ վտանգը օրհասական է ճիշտ այնպես, ինչպես Արցախի դեպքում է, այնպես, ինչպես Արցախի մասին էինք խոսում, հիմա խոսում ենք Սյունիքի վերահաս վտանգի մասին:

Այստեղ ՔՊ-ական մի քանի պատգամավոր եմ տեսել, աչքերիս չեմ հավատում, որ դրանք դեռեւս երես ունեն այստեղ հայտնվելու, մարդկանց առաջ հայտնվելու. սա նրանց վատ քաղաքականության հետեւանքն է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Ռուբեն Վարդանյանին անձամբ չեմ ճանաչում, երբեւէ չեմ հանդիպել, բայց այս լուսանկարից ազդվեցի:

Ռուբեն Վարդանյանն իր բարեկեցիկ կյանքը թողել, Արցախում 9 ամիս շրջափակման մեջ ապրում էր: Անշուշտ, ուներ Արցախից անվտանգ դուրս գալու հնարավորություն, բայց մինչ այս չի արել»:

Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդանյանը երեկ ձերբակալվել է Բերձորի միջանցքն անցնելիս:

Նշենք նաեւ, որ ՀՀ կառավարությունն Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի պաշտպանության համար դիմել է ՄԻԵԴ: Այս մասին հայտնում է Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի մամուլի խոսնակ Հասմիկ Սամվելյանը:

Հայկական կողմը Բաքվից պահանջել է տեղեկություններ տրամադրել, թե ուր են տարել նախկին նախարարին:

ԽԱՅԹԵԼ Է ՊՈՒՏԻՆԻՆ

ԱՄՆ նախկին պետքարտուղար Հիլարի Քլինթոնը խայթել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին ՆԱՏՕ ընդլայնման առիթով՝ ասելով. «Ափսոս, Վլադիմի՛ր, ինքներդ եք մեղավոր»:

Պետդեպարտամենտ վերադառնալով իր պաշտոնական դիմանկարի ներկայացման համար՝ Քլինթոնն օգտվել է առիթից, որպեսզի ցույց տա նողկանքը նախկին նախագահ, հանրապետական Դոնալդ Թրամփի հանդեպ, որն իրեն հաղթեց 2016թ. ԱՄՆ նախագահական ընտրությունների ժամանակ:

Քլինթոնը ենթադրել է, որ Ուկրաինային ԱՄՆ աջակցության ունակության վերաբերյալ հարցերը ծագել են Թրամփի ժառանգության պատճառով, քանի որ օտարվել են դաշնակիցները: «Մարդիկ կարող էին կասկածել սրանում, որովհետեւ մենք այնքան շատ կամուրջներ ենք այրել մեր դաշնակիցների եւ մեր բարեկամների հետ»,- ասել է նա:

ԱՄՆ դեմոկրատ նախագահ Ջո Բայդենը, նրա խոսքով, Օբամայի վարչակազմի բաթմաթիվ առաջնահերթությունների կողմնակիցն է:

«Ուկրաինայում դեմոկրատիայի պաշտպանությունը ՆԱՏՕ-ի ընդլայնում է նշանակում: Ի դեպ, ափսոս, Վլադիմի՛ր, ինքներդ եք դրանում մեղավոր»,- ասել է նա՝ ծիծաղ եւ ծափահարություններ առաջացնելով: «Մենք միշտ ասել ենք՝ մարդկանց չեն ստիպում մտնել ՆԱՏՕ, մարդիկ իրենք են ընտրում եւ ցանկանում մտնել ՆԱՏՕ»,- ավելացրել է նա:

Քլինթոնը նկարագրել է, թե ինչն է առաջնահերթ համարել Բայդենի եւ Օբամայի համար. «ՆԱՏՕ ընդլայնում, դիմակայություն ռուսական ագրեսիային եւ Չինաստանի կողմից առաջացող խնդիրների լուծում»:

ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՈՒՐԸ՝ ՇՌԱՅԼՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Հայաստանի կառավարության ենթակայության տակ գտնվող 12 նախարարությունների գնումները եւ կնքած պայմանագրերը՝ հասկանալու համար, թե որքան է կազմել խմելու ջրի ծախսը 2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում: Սկզբում ասենք, որ այժմ աշխարհում ռիսկային է ջրի ոչ ճիշտ օգտագործումը, քանի որ աշխարհի մասշտաբով առկա է քաղցրահամ ջրի զգալի պակաս: Նաեւ, ջրօգտագործման մասնագետների խոսքով, որոնք ունեն երկար տարիների փորձ, քաղցրահամ ջուրը համարվում է ամենաթանկարժեք ռեսուրսներից մեկը: Հայաստանի դեպքում այն ավելի կարեւոր է դառնում, քանի որ տարածաշրջանում ամենամեծ քաղցրահամ ջրային պաշարը մերն է՝ Սեւանա լիճը: Այսպիսով, Սեւանի խնդիրները առերեւույթ լուծող Շրջակա միջավայրի նախարարությունը, որը վերջերս համարվում է ամենաանգործ նախարարությունը, խմելու ջրի համար որեւէ գումար չի ծախսել. երեւի նախարարությունից ակնկալվող գործառույթները նախարարությունում կոմպենսացնում են միայն ջուր չօգտագործելով: Արդարադատության նախարարությունը խմելու ջրի մատակարարման ծառայությունների համար նշված ժամանակահատվածում ծախսել է 1 մլն 560 հազար դրամ: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը եւս խմելու ջրի մատակարարման ծառայությունների համար ոչ մի գնում չի կատարել, սակայն միլիոնավոր դրամների դրամաշնորհային ծրագրեր է ֆինանսավորել. հաջորդիվ նաեւ կներկայացնենք այդ ծախսերի նպատակայնությունը: Առողջապահության նախարարությունը եւս դասվում է խմելու ջուր չգնողների դասին: Նրանք, թերեւս, ըստ իրենց արած բազմաթիվ հայտարարությունների, զբաղվում են ավելի կարեւոր գործով, սակայն կարեւորությունն ինչպե՞ս պետք է հաստատվի, եթե Հայաստանում ամենախնդրային պետպատվերներ տրամադրելու ծրագրերը պարբերաբար ծախողվում են, եւ հատկացումները, վերաբաշխումները չեն բավականացնում: Հենց այս պատճառով էլ շատ քաղաքացիների հիվանդության ախտորոշումը հաճախ հերթերի պատճառով նախատեսվում է հաջորդ տարի, ինչը ոլորտի անհավասարաչափ եւ ոչ գրագետ բաշխման արդյունք է: Նույնն է նաեւ Արտաքին գործերի նախարարությունում. նրանք, ջուր օգտագործելու փոխարեն, իրենց հատկացված գումարները ներդնում են ներկայացուցչական ծախսերի մեջ, եւ գրեթե ոչինչ՝նախարարության կարիքների համար:

Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունը, կոնյակներից, չրերից, շոկոլադե չրերից բացի, զարմանալիորեն նաեւ խմելու ջուր է օգտագործում: Այս տարվա ընթացքում նրանք 1151 հազար դրամ խմելու ջրի մատակարարման ծախսեր են կատարել: Էկոնոմիկայի նախարարությունը, հիշեցնենք, տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության եւ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության միավորման արդյունքում է ստեղծվել, եւ հենց այս նույն «ճշգրտությամբ» էլ նախարարությունը կազմակերպում է այս ոլորտների աշխատանքները, սակայն, չգիտես՝ ինչու, այդ ոլորտներում զգալի առաջընթաց վերջերս չի եղել: ԿԳՄՍ նախարարությունը, որը վերջերս աղմկահարույց ձախողումների մեջ է եւ կորցրել է կրթության ոլորտը կառավարելու ղեկը, կատարել է 7 հազար դրամ արժողությամբ ջրի սպառման ծախս: Հուսանք՝ գոնե ջրօգտագործումը մտքի թարմություն կհաղորդի նախարարությանը: Ներքին գործերի նախարարությունը ջրի ոչ մի սպառում չի ներկայացրել, սակայն «յուղալի» գնումներ է կատարել, որոնք նախարարության հետ պարզաբանելուց հետո կհրապարակենք: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը եւս նման գնումներ չի իրականացրել: Ֆինանսների նախարարությունը թերեւս հայտնվել է 2-րդ տեղում խմելու ջրի օգտագործմամբ. նրանց գնումները կազմել են 489 հազար 600 դրամ:

ՊԵՍԿՈՎԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ



ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը տեղեկություն չունի, որ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը ձերբակալվել է Ադրբեջանի սահմանին Գորիս մեկնելու փորձի ժամանակ:

«Ես նման տեղեկություն չունեմ, ուստի ոչինչ չեմ կարող ասել այս հարցի վերաբերյալ»,- լրագրողների հետ զրույցում պատասխանելով համապատասխան հարցին՝ ասել է Կրեմլի ներկայացուցիչը:

Նա, սակայն, դժվարացավ ասել, թե արդյոք Վարդանյանն այժմ Ռուսաստանի քաղաքացիություն ունի: «Եթե նա դեռ Ռուսաստանի քաղաքացի է, ապա Ռուսաստանի Դաշնությունը կպաշտպանի նրա իրավունքները»,- ասել է Պեսկովը:

ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարար Անալենա Բերբոքը հայտարարություն է տարածել Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկացմամբ՝ X-ի իր միկրոբլոգում Բերբոքը գրել է, որ հազարավոր երեխաներ, կանայք եւ տղամարդիկ Լեռնային Ղարաբաղում այնքան վախեցած են իրենց ֆիզիկական կյանքի համար, որ այլ ելք չեն տեսնում, քան ճանապարհ ընկնել դեպի Հայաստան հաճախ միայն ամենաանհրաժեշտ իրերով եւ ամբողջովին լեփ-լեցուն մեքենաներով:

«Յուրաքանչյուր ժամ նրանց թիվն ավելանում է: Ոչ ոք իրականում չգիտի, թե ինչպիսին է Լեռնային Ղարաբաղում մարդկանց վիճակը: Այժմ անհրաժեշտ է թափանցիկություն եւ տեղում միջազգային հանրության աչքերն ու ականջները: Մենք մեր գործընկերների հետ աշխատելու ենք հնարավորինս արագ դիտորդներ ուղարկելու ուղղությամբ:

Վստահության ապացույց առ այն, որ Ադրբեջանը լրջորեն է վերաբերվում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության եւ բարեկեցության իր խոստումներին, կլիներ այն, եթե Ադրբեջանը թույլ տար միջազգային դիտորդների ներկայությունը:

Գրեթե ամեն ինչ դեռ պակասում է: Լաչինի միջանցքով օգնությունը չպետք է մարդկանց հասնի մաս-մաս, այլ հուսալիորեն եւ միշտ: Ես որոշել եմ ԿԽՄԿ միջոցով մեր մարդասիրական օգնությունը 2-ից դարձնել 5 մլն եվրո»,- գրել է Անալենա Բերբոքը:

ԱՇԽԱՐՀ

ՉԻ ԲԱՑԱՌԵԼ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի জոլին ասել է, որ բոլոր տարբերակները սեղանին են՝ արձագանքելով կանադացի օրենսդիրների՝ Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ կիրառելու կոչերին:

Ելույթ ունենալով Համայնքների պալատում՝ նա նշել է, որ երբ խոսքը վերաբերում է պատժամիջոցներին, իրենք միշտ ցանկանում են գործել այլ երկրների հետ միասին, քանի որ կարեւոր է ճնշում գործադրելը: «Պատժամիջոցների կիրառումը կարող է շատ արդյունավետ լինել... Մենք շարունակում ենք Ադրբեջանին կոչ անել դադարեցնել ռազմական գործողությունները: Պետք է ապահովվի մարդասիրական պաշարների եւ օգնության ազատ տեղաշարժը, իսկ խաղաղ բնակիչները պետք է պաշտպանված լինեն»,-ասել է նա:

জոլին հավելել է, որ 2020 թվականի հրադադարի համաձայնագրում ներգրավված բոլոր կողմերը պետք է հարգեն իրենց պարտավորությունները՝նշելով, որ նա այդ հարցերը բարձրացրել է միջազգային ատյաններում, այդ թվում՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում, անցյալ շաբաթ:

Նա ասել է, որ Կանադան վճռականորեն աջակցում է համապարփակ խաղաղության պայմանագրի կնքմանը՝ հավելելով, որ Օտտավան պարտավորվել է երկու փորձագետ ուղարկել Հայաստանում Եվրոպական միության նորաստեղծ առաքելությանը մասնակցելու:

Կանադացի օրենսդիրները Թրյուդոյի կառավարությանը կոչ են անում պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի դեմ՝ ի պատասխան անցյալ շաբաթ Լեռնային Ղարաբաղ վերջինիս ռազմական ներխուժման:

«Մենք գիտակցում ենք, որ Կանադան մեծ դեր չի խաղում այս [աշխարհագրական] տարածաշրջանում: Բայց սա այն է, ինչ մենք կարող ենք անել, սա այն է, ինչ կարող է անել Կանադայի կառավարությունը՝ արտահայտելու մեր մտահոգությունը, հայտնելու, որ մենք տեսնում ենք, որ թիրախ են դառնում քաղաքացիական անձինք»,- CBC News-ին ասել է կանադացի պատգամավոր Հիզեր Մաքֆերսոնը:

Անցյալ շաբաթ նա եւ իր գործընկեր Ալեքսանդր Բուլերիսը նամակ են գրել արտաքին գործերի նախարար Մելանի জոլիին՝ կոչ անելով պատժամիջոցներ կիրառել:

«Ինչպես գիտեք, այս հակամարտությունը ռազմական լուծում չունի: Միայն դիվանագիտական ճնշումը եւ համապարփակ երկխոսությունը կհանգեցնեն տեւական լուծման»,- գրել են օրենսդիրները՝ հավելելով, որ կառավարությունը պետք է դիտարկի «նպատակային պատժամիջոցները Ադրբեջանի ֆիզիկական անձանց եւ կազմակերպությունների դեմ, որոնք պատասխանատու են տարածաշրջանում միջազգային իրավունքի խախտման եւ մարդու իրավունքների ոտնահարման համար»:

«Կանադայի պատժամիջոցների ռեժիմն ունի իր թերությունները,- ասել է պատգամավոր Ստեֆան Բերգերոնը Համայնքների պալատում բանավեճի ժամանակ,- բայց դա օտար կառավարությունների վրա ճնշում գործադրելու արդյունավետ միջոց է: Ի՞նչի ենք սպասում, որ պատժամիջոցներ սահմանենք Ադրբեջանի դեմ ոչ միայն Հայաստանի, այլեւ Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության նկատմամբ նրա անընդունելի պահվածքի համար»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՑԱԽԻՑ՝ ԵՐԵՎԱՆ ⇨

ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնում են, որ սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի եւ Ստեփանակերտի հարակից տարածքում պայթյունի հետեւանքով տուժած անձինք շարունակում են Լեռնային Ղարաբաղից տեղափոխվել Հայաստան:

Մինչ երեկ ցամաքային եւ օդային ճանապարհով հանրապետության բժշկական կազմակերպություններ է տեղափոխվել 237 մարդ, որից՝ 142-ը՝ ուղղաթիռով, 95-ը՝ շտապօգնության մեքենաներով:

Ներկայումս տուժածները գտնվում են բժիշկների հսկողության տակ եւ ստանում անհրաժեշտ բժշկական օգնություն:

Տեղափոխման գործընթացը դեռեւս շարունակվում է:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հրապարակել է Արցախում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ կորցրած զինվորների ցուցակը:

«Ներկայացնում ենք 2023 թվականի սեպտեմբերի 19-ից-20-ը հակահաբեկչական գործողությունների ժամանակ զոհված ադրբեջանցի զինվորականների լուսանկարները, նրանց անունները, ազգանունները, զինվորական կոչումը եւ ծննդյան տարեթիվը: Նշված ժամանակահատվածում Ադրբեջանի հանրապետությունը կորցրել է 192 զինվորական եւ ունի 512 վիրավոր», - ասված է հաղորդագրության մեջ:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿՈՉԸ

Գերմանիայի արտաքին գործերի նախարար Անալենա Բարբոքը երեկ հայտարարել է միջազգային դիտորդական առաքելություն Արցախ հնարավորինս արագ ուղարկելու անհրաժեշտության մասին:

«Այժմ անհրաժեշտ է թափանցիկություն, եւ կարեւոր է, որ միջազգային հանրության աչքերն ու ականջները տեղում լինեն: Մեր գործընկերների հետ միասին մենք բոլոր ջանքերը կգործադրենք հնարավորինս շուտ դիտորդներ ուղարկելու համար»,- ասվում է Բերբոքի հայտարարության մեջ, որը հրապարակվել է Գերմանիայի ԱԳՆ կայքում:

Նրա խոսքով՝ Արցախում դեռեւս առկա է առաջին անհրաժեշտության ապրանքների սուր պակաս:

«Ես որոշել եմ եւս մեկ անգամ զգալիորեն ավելացնել մեր մարդասիրական օգնությունը եւ հետագայում ավելացնել մեր ֆինանսավորումը Կարմիր խաչի միջազգային կոմիտեին 2-ից մինչեւ 5 միլիոն եվրո», - ավելացրել է Բուրբոքը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ, ԸՆՏԱՆԻՔԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ավարտվել է Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրի նախկին ղեկավարի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, վստահված գույքը հափշտակելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքերի լվացում կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի քննչական բաժնում իրականացված քննությամբ հիմնավորվել է, որ Ներքին Խնձորեսկ բնակավայրի ղեկավարը, 2005 թ. ստանձնելով հիշյալ պաշտոնը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, պաշտոնեական կեղծիք կատարելով, իրենից ծառայողական կախվածության մեջ գտնվող աշխատակիցների, համայնքի ղեկավարի տեղակալի, վիճակահանության հանձնաժողովի նախագահի եւ անդամների միջոցով, իրականությանը չհամապատասխանող գրառումներ ներառելով համապատասխան արձանագրությունների մեջ, հաստատելով համապատասխան փաստաթղթերը, իրեն վստահված խոշոր չափերով՝ ընդհանուր 3.063.250 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող, ընդհանուր 4.824 հա հողամասերն օտարել է դստերը: Վերջինս իր հերթին ձեւական առուվաճառքի պայմանագրով այդ գույքը փոխանցել է եղբորը:

Բացի այդ, հանդիսանալով հիշյալ գյուղական համայնքի «Ջոհված ազատամարտիկների հրապարակի բարեկարգման օժանդակ աշխատանքներ» ծրագրի պատվիրատու եւ նշված աշխատանքների կազմակերպման ու իրականացման ղեկավար՝ համայնքի վարչական տարածքում զոհված ազատամարտիկների՝ գոյություն չունեցող հրապարակի բարեկարգման աշխատանքները նշված ծրագրով նախատեսված ծավալով ու ժամանակահատվածում փաստացի չիրականացնելու, օժանդակ աշխատակիցների կողմից դրանց կատարմանը փաստացի չմասնակցելու պայմաններում Ներքին Խնձորեսկ բնակավայրի նախկին ղեկավարն անձամբ ստորագրել է իր հանձնարարությամբ կազմված՝ կատարվելիք աշխատանքների՝ իրականությանը չհամապատասխանող բովանդակությամբ կատարողական ակտը, 25 աշխատակիցների նույն ժամանակահատվածի հաճախումները հավաստող ցուցակը: Այն շրջանառության մեջ դնելով՝ համայնքի նախկին ղեկավարը հափշտակել է ծրագրի շրջանակում հրապարակի բարեկարգմանը հատկացված, տեղական գանձապետական բաժին փոխանցված 1.844.600 ՀՀ դրամից օժանդակ աշխատակիցների վարձատրության համար նախատեսված խոշոր չափերով՝ ընդհանուր 1.132.500 ՀՀ դրամ աշխատավարձի գումարը:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ նշված բնակավայրի նախկին ղեկավարը փաստացի չկայացած աճուրդների միջոցով իր ընտանիքին պատկանող ընկերության անունից հանդես եկած մորաքրոջ որդուն 4.272.000 ՀՀ դրամ եւ 2.740.800 ՀՀ դրամ արժեքներով օտարել է ընդհանուր 13.957.800 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող ընդհանուր 32.46 հա երկու հողամասերը: Դրանք սեփականությամբ իր եւ իր ընտանիքի անդամներին պատկանող ընկերության հաշվեկշիռ ներառելու, իրենց սեփականությունը դարձնելու միջոցով նա յուրացրել է իրեն վստահված համայնքային սեփականություն հանդիսացող առանձնապես խոշոր չափերով հիշյալ հողամասերը:

Բացի այդ, կեղծ որոշման հիման վրա՝ փաստացի չկայացած մրցույթի արդյունքում համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր 15.8654 հա հողամասերը վարձակալությամբ տրամադրվել են դրա իրավունքը չունեցող անձանց՝ հիշյալ համայնքի նախկին ղեկավարի որդուն, աշխատակցին եւ մրցութային հանձնաժողովի անդամին, ինչպես նաեւ փաստացի չկայացած մրցույթի մյուս մասնակիցներին՝ էական վնաս պատճառելով համայնքի եւ հասարակության օրինական շահերին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ներքին Խնձորեսկ համայնքի նախկին ղեկավարին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ), ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ), 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Վերջինիս դստերը եւ որդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Հսկող դատախազի կողմից որոշումներ են կայացվել՝ հիշյալ ենթադրյալ հանցագործություններում ներգրավված մյուս անձանց նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդումներ չհարուցելու մասին:

Գորիս համայնքին պատճառված վնասի հատուցումը, ինչպես նաեւ հանցավոր ճանապարհով ստացված գույքերի հնարավոր բռնագանձումն ապահովելու համար արգելանք է դրվել Ներքին Խնձորեսկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 19.88 հա եւ 12.58 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերի, ինչպես նաեւ 4.824 հա վարելահողի վրա:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՉԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ, ԳԵՐԵՎԱՐԵԼ

Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին երեկ ադրբեջանական կողմը բերման է ենթարկել Լաչինի միջանցքի անցակետում. RBC-ին հայտնել է նրա կինը՝ Վերոնիկա Զոնաբենդը:

«Այսօր առավոտյան ամուսինս՝ Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ձերբակալվել եւ գերեվարվել է Ադրբեջանի իշխանությունների կողմից սահմանին, երբ փորձում էր հեռանալ Արցախից»,- ասաց նա:

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ԿԱՄՐՋԻ ՏԱԿ

Սեպտեմբերի 26-ին ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել է, որ Հաղթանակ կամրջի տակ կրակոցի ձայներ են լսվում: Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ մեկնել է ոստիկանության Մարաշի բաժանմունքի օպերատիվ խումբը:

ՆԳՆ ոստիկանության կենտրոնական բաժնի քրեական հետախույզները եւ պահպանության բաժնի արագ արձագանքման խմբի ծառայողները Հաղթանակ կամրջի տակ հայտնաբերել, խուզարկություն կատարելու եւ սառը զենք պահելու եւ կրելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ Կենտրոնական բաժին են տեղափոխել 39-ամյա տղամարդու: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել են օդաճնշիչ ատրճանակ, պահեստատուփ՝ 7 մետաղյա գնդակով, եւ պոլիէթիլենային տոպրակ, որի մեջ օդաճնշիչ ատրճանակի համար նախատեսված մետաղյա գնդիկներ էին:

39-ամյա տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ա.Ե.-ն, այլ քաղաքացիների հետ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, խաբեության եղանակով հափշտակել եւ օրինականացրել է առանձնապես խոշոր չափերով գույքեր. հայտնում են Գլխավոր դատախազությունից:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով պարզվել է, որ քաղաքացի Ա.Ե.-ն տեւական ժամանակ՝ 2008 թվականից մինչեւ 2011 թվականը ներառյալ, ճանաչել եւ տարբեր հարցերով շփումներ է ունեցել Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի այդ ժամանակահատվածի դատավոր Ա.Մ.-ի օգնական Գ.Ս.-ի հետ:

Մասնավորապես, 2012 թվականի ընթացքում Ա.Ե.-ն եւ դատավորի օգնական Գ.Ս.-ն խաբեության եղանակով ձեռք են բերել Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանում գտնվող 0,75 հա մակերեսով, 300 մլն դրամ շուկայական արժեքով հողամասը:

Նույն թվականին Ա.Ե.-ն 20 մլն դրամ շուկայական արժեքով, 394 քմ մակերեսով հողամասը եւ դրա վրա գտնվող 543 քմ մակերեսով շինությունը հափշտակելու նպատակով ձեռք է բերել կեղծ փաստաթղթեր:

2013 թվականի հունվարին Ա.Ե.-ն իր մտերիմ՝ փաստաբանական գործունեություն իրականացնող Ն.Հ.-ի, դատավորի օգնական Գ.Ս.-ի եւ քաղաքացի Վ.Մ.-ի հետ նախնական համաձայնությամբ ձեռք է բերել 1 մլրդ 500 մլն դրամ շուկայական արժեքով, Դավիթ Բեկ փողոցին հարող տարածքում գտնվող 2.61 հա մակերեսով հողամասը:

Նկարագրված երեք դեպքերում վերոնշյալ կեղծ փաստաթղթերի հիման վրա հողամասերն Անշարժ գույքի կադաստրի կոմիտեում գրանցելու եւ տնօրինելու հնարավորություն ստանալու նպատակով փաստի հաստատման պահանջի մասին դիմում է ներկայացվել Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան. երեք դեպքում գործը մակագրվել է դատավոր Ա.Մ.-ին:

Ա.Ե.-ն, նկարագրված երեք գործարքներից երկուսի դեպքում տարատեսակ քաղաքացիաիրավական գործարքներով հողամասերի իր մասնաբաժնի իրական պատկանելիությունը եւ ծագումը թաքցնելու, խեղաթյուրելու միջոցով օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով՝ 76 մլն դրամ եւ 138 մլն դրամ արժեքներով հողամասերը:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ՝ Ա.Ե.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 63 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարած:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

«Յուքոմ» ՓԲԸ-ն «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ի դեմ գումարի բռնագանձման պահանջով հայցադիմում է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան, այն դատարանին մակագրվել է 2023թ. հուլիսի 3-ին: Դատարանը հուլիսի 11-ին որոշել է քաղաքացիական գործը քննել պարզեցված կարգով, մերժել հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությունը: Օգոստոսի 30-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի՝ Նոյեմբերյանի նստավայրում կայացած դատական նիստում դատավոր Նարինե Անանյանը որոշել է դատական նիստ նշանակել սեպտեմբերի 29-ին, սույն հայցով գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023թ. հոկտեմբերի 9-ին: Տավուշի մարզային «Տավուշ-ՏՎ» ՍՊԸ-ն սկսել է գործել 2020թ. ապրիլից, այդ հեռուստաընկերության տնօրենը ճգնաժամային հաղորդակցության եւ տեղեկատվության ոլորտի մասնագետ, լրագրող Նիկոլայ Գրիգորյանի որդին է՝ Արմեն Գրիգորյանը: Նիկոլայ Գրիգորյանը 2019թ. ապրիլի 17-ից մինչեւ 2021թ. մայիսի 3-ը պաշտոնավարել է որպես Տավուշի մարզպետի խորհրդական, թվային հեռարձակում իրականացնող մարզային հեռուստաընկերության ստեղծումը նրա մտահղացումն էր: «Տավուշ-ՏՎ»-ի եթերում շատ են երեւանյան հեռուստաընկերությունների հաղորդումների կրկնություն-ցուցադրությունները, մարզային հեռուստաընկերությունը գրեթե չի անդրադառնում Տավուշի մարզի սուր հիմնախնդիրներին:

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԻՑ ԴԺԳՈՀ ԵՆ

Սեպտեմբերի 23-ին Իջեւանի ավագ դպրոցում ուսուցիչների կամավոր ատեստավորման շրջանակներում ռուսաց եւ անգլերեն լեզուների ուսուցիչների կողմից թեստերի հանձնում է կայացել: Դրան մասնակցած ուսուցիչները հայտնեցին, որ ատեստավորմանը մասնակցելու հայտ ներկայացրած շատ ուսուցիչներ չէին ներկայացել քննությանը, որովհետեւ արդեն տեղեկացել են, որ թեստերում ընդգրկված են շատ խրթին, իրենց առարկայի դպրոցական ծրագրի հետ քիչ առնչություն ունեցող հարցեր, որոնց պատասխանելու համար քիչ ժամանակ է տրվում: Թեստավորմանը մասնակցել են նաեւ Տավուշի դպրոցների ուսուցիչներ, որոնք ունեն միջին մասնագիտական կրթություն, եւ պետք է ատեստավորման ժամանակ դրական արդյունք ունենան, այլապես կազատվեն աշխատանքից: Ատեստավորմանը մասնակցած ուսուցիչները շատ դժգոհ են քննական թեստերի հարցերից: Սեպտեմբերի 23-ի ատեստավորմանը մասնակցած ռուսերենի մի ուսուցչուհի՝ ազգությամբ ռուս, որը երկար տարիներ հաջողությամբ դասավանդում է, քննությունից կտրվել է. նրա վկայությամբ՝ թեստերի հարցերի մեջ եղել են ռուսերեն խոսակցական բառեր: Միջին մասնագիտական կրթությամբ ռուսերենի մեկ այլ ուսուցուհի, որը 40 տարի դասավանդում է դպրոցում եւ 3 տարի հետո կենսաթոշակի պիտի անցեր, թեստավորումից բացասական արդյունք է ունեցել, ուստի պետք է ազատվի աշխատանքից: Անգլերենի ուսուցիչները պարզել են, որ այդ օրը կայացած թեստավորման հարցերը Քեմբրիջի ուսուցիչների դասագրքից են եղել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ազգային ժողովում քննարկվել են «Զբոսաշրջության մասին» օրենքում առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները:

«Առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները նպաստելու են քաղաքացիների սպառողական իրավունքների պաշտպանությանը, զբոսաշրջային գործունեության ծառայություններին եւ սուբյեկտներին ներկայացվող պահանջների հստակեցմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տնտեսական, մարդկային ռեսուրսների համաչափ զարգացմանը»,- ասել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի՝ սեպտեմբերի 27-ի նիստում «Զբոսաշրջության մասին» եւ կից ներկայացված օրենքներում լրացումներ եւ փոփոխություններ նախատեսող օրինագծերի փաթեթի քննարկման ժամանակ:

Նախարարը կարեւորել է զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց եւ նրանց կողմից մատուցվող ծառայությունների հստակ տարբերակումը, պահանջների եւ չափանիշների սահմանումը, զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց՝ իրավական դաշտում գործունեության ապահովումը, զբոսաշրջության բնագավառում քաղաքականություն մշակող մարմինների ազդեցությունների հստակեցումը, վերահսկողության մեխանիզմների ներդրումը, հյուրանոցային ծառայությունների՝ միջազգային չափանիշներին համապատասխան որակի ապահովումը:

Վահան Քերոբյանն անդրադարձել է նաեւ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների կողմից իրենց գործունեության շրջանակում որակյալ ծառայությունների մատուցմանը, տեղեկատվության տրամադրմանը:

Նա խոսել է նաեւ զբոսաշրջային ավտոբուսների՝ անվտանգային եւ միջազգային տեխնիկական չափանիշներին համապատասխանեցման մասին:

Նախարարը տեղեկացրել է, որ նշված խնդիրների կարգավորման նպատակով ներկայացված օրենքի նախագծով նախատեսվում է հստակեցնել զբոսաշրջության ծառայություններ տրամադրելու պայմանները եւ վարահսկողության մեխանիզմները, սահմանվում են հստակ պահանջներով չափանիշներ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց համար, հստակեցվում է այս բնագավառում կարգավորման շրջանակը Կառավարության պետական լիազորված մարմնի լիազորություններն ու գործառույթները, ներդրվում է զբոսաշրջային ծառայությունների մատուցման էլեկտրոնային եւ զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյան:

Անդրադառնալով որակական չափանիշների բարելավմանը՝ Վահան Քերոբյանը նշել է, որ օրենքի նախագծով կներդրվեն միջազգային չափանիշներին համապատասխան որակավորման մեխանիզմներ, կհստակեցվեն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին ներկայացվող պահանջները: Նախագծով նախատեսվում է նաեւ ներդնել զբոսաշրջային ավտոբուսներով ուղեւորափոխադրման որակավորման համակարգ:

Զբոսաշրջության կոմիտեի նախագահի տեղակալ Սուսաննա Հակոբյանը տեղեկացրել է, որ օրենքի նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը:

Պատգամավորներն օրենքի նախագծի վերաբերյալ հնչեցրել են հարցեր, արել առաջարկություններ:

ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանի առաջարկով՝ օրենսդրական փաթեթը հետաձգվել է երկու ամիս ժամանակով. կկազմակերպվի աշխատանքային քննարկում շահագրգիռ կողմերի հետ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ

ՉԵԽԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

«Մարդը կարիքի մեջ» չեխական բարեգործական հասարակական կազմակերպության թիմը Հայաստանում հումանիտար օգնություն է տրամադրում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մարդկանց՝ հատկացնելով սնունդ, ապահովելով շարժունակության միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց համար եւ անվտանգ տարածքներ՝ երեխաների համար: «Ժողովուրդ» օրաթերթն այս մասին տեղեկանում է կազմակերպության կայքում տարածված հաղորդագրությունից:

«Իրավիճակը ծայրահեղ ծանր է, սահմանին ավելանում է մարդկանց թիվը: Կան տարեցներ եւ փոքր երեխաներ ունեցող ընտանիքներ: Շատերն իրենց հետ վերցրել են միայն տարրական իրեր եւ չունեն համապատասխան հագուստ, սնունդ կամ հիգիենայի պարագաներ: Մենք հույսը դնում ենք մեր դոնորներից ստացվող միջոցների վրա՝ արձագանքելու քաղաքացիական բնակչության ընթացիկ կարիքներին», - հայտնել է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի հայաստանյան առաքելության տնօրեն Վարդուհի Դադունցը:

Կազմակերպության գործադիր տնօրեն Շիմոն Պանեկը հանրությանը խնդրել է արձագանքել SOS Armenia արտակարգ կոչին՝ կատարելով նվիրատվություններ:

Իր հերթին «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի Հայաստանի համակարգող Միխալ Ջելբան հայտնել է, որ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվածներին աջակցությունը տրամադրվում է տեղի իշխանությունների միջոցով: Այդ օգնությունը ներառում է նաեւ սնունդ, շարժասայլակներ:

Ըստ կազմակերպության հաղորդագրության՝ նախնական մարդասիրական օգնության տրամադրումը հնարավոր է եղել՝ շնորհիվ կազմակերպության «Ընկերների ակումբ» մարդասիրական հիմնադրամի միջոցներից հատկացված 40 հազար եվրոյի:

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն Հայաստանում մշտական առաքելություն ունի 2003 թ.-ից, իսկ առաջին մարդասիրական օգնությունը Հայաստանին տրամադրվել է 1988 թ.-ի աղետալի երկրաշարժից հետո: Կազմակերպությունը հիմնադրվել է Պրահայի հենց այն մի խումբ ուսանողների կողմից, որոնք Սպիտակի երկրաշարժից տուժածների համար 50 տոննա օգնություն են հավաքել եւ ուղարկել Հայաստան:

● Անցած 1 օրվա ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ներկայացնելով «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Կարեն Թամազյանը նշել է, որ նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է նվազեցնել շրջանառության հարկ վճարողների իրացման շրջանառությունների թերհայտարարագրման հնարավոր ռիսկերը՝ իրականացնելով արդյունավետ հարկային վարչարարություն: Հարցն առաջին ընթերցմամբ քննարկվել է ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի՝ սեպտեմբերի 27-ի նիստում:

Նախագծով առաջարկվում է նաեւ կարգավորել ապրանքների ձեռք բերման փաստաթղթավորման պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հարցերը: Դրամարկղային գործառնությունների հաշվառման նպատակով դրամարկղային գրքերի վարումը կատարվելու է էլեկտրոնային եղանակով:

«Նախատեսվում է հստակեցնել ընտրված ապրանքների գծով չափագրման ուսումնասիրության շրջանակում գույքագրում իրականացնելու դրույթը: Ընդ որում՝ նախագծի կարգավորումներով հստակ սահմանվում է, որ հարկային մարմինն իրավունք ունի նման գործողություն իրականացնել այն հարկ վճարողների մոտ, որոնց ձեռքբերման կամ իրացման շեմը տարվա ընթացքում գերազանցում է 24 մլն դրամը»,- մանրամասնել է հիմնական զեկուցողը:

Օրենսդրությամբ հստակեցվում է չփաստաթղթավորված ապրանքներ հայտնաբերելու պատասխանատվությունը: Մասնավորապես, սահմանվում է, որ շրջանառվող հարկ վճարողների մոտ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջի փաստը չհայտնաբերվելու դեպքում համալիր հարկային ստուգմամբ նրանցից կգանձվի ապրանքների ձեռք բերման գնի 20 տոկոսի չափով տուգանք:

Ըստ Կարեն Թամազյանի՝ պատասխանատվություն կսահմանվի այն դեպքերի համար, երբ օպերատիվ հետախուզական միջոցառումների ընթացքում կհայտնաբերվեն այնպիսի դեպքեր, երբ գույքը հանձնվում է վարձակալության, կամ պետական գրանցում չի ստացել այդ վաճառքի գործարքը, կամ նախապես հարկային մարմին հայտարարություն չի ներկայացվել ֆիզիկական անձի կողմից վարձակալության գործարքի առկայության վերաբերյալ:

Սահմանվում է նաեւ, որ ապահովագրական գործակալները եւ ապահովագրական բրոքերները հատուկ հարկման, մասնավորապես՝ շրջանառության համակարգում չեն գործելու:

ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանի՝ «ո՞րն է պարտադիր փաստաթղթավորման պահանջում փոփոխություն կատարելու նպատակը» հարցին ի պատասխան՝ ՊԵԿ նախագահի տեղակալն ասել է. «Փոփոխություն կատարելու հիմքը հավասարության ապահովումն է»: Նախագիծը ստացել է դրական եզրակացություն:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միությունն իր խոր մտահոգությունն է հայտնում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության բռնի տեղահանման կապակցությամբ:

«Ադրբեջանը սեպտեմբերի 19-20-ին Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքում սանձազերծեց հերթական լայնամասշտաբ անհամաչափ պատերազմ, որի ընթացքում թիրախավորվել են քաղաքացիական ենթակառուցվածքներ, բնակելի տներ, շտապ օգնության մեքենաներ, զոհվել են քաղաքացիական անձինք, այդ թվում՝ երեխաներ: Նման պայմաններում Լեռնային Ղարաբաղի բնիկ էթնիկ հայ բնակչությունը հարկադրված ֆիզիկական գոյության պահպանման նպատակով լքում է իր հայրենիքը:

Լեռնային Ղարաբաղի հայությունը, 10 ամիս գտնվելով լիակատար շրջափակման մեջ, մատնվելով սովի եւ աննկարագրելի տանջանքների, ամիսներ շարունակ օգնության կոչ էր ուղղում քաղաքակիրթ աշխարհին, որի համաչափ արձագանքի բացակայությունը հանգեցրեց իրական էթնիկ զտման, մարդու բնական իրավունքների բազմակի եւ անթույլատրելի խախտման դեպքերի, որն, անշուշտ, այսօր կարիք ունի խստագույն դատապարտման:

Միությունը պնդում է, որ 21-րդ դարում, երբ մարդու ազատ, հավասար եւ արժանապատիվ կյանքը համարվում է բարձրագույն արժեք, նման վայրագությունների արմատները պետք է փնտրել նախկինում կատարված հանցանքների անպատժելիության մեջ:

1918թ. սեպտեմբերի 15-17-ը օսմանա-ադրբեջանական զորքերի վայրագությունների զոհ դարձան Բաքվի շուրջ 30 հազար հայեր, ավելի քան 30 հազարը հարկադրված հեռացել է քաղաքից: 4 հազարից ավելի հայեր գերվել են, որոնցից 445՝ մահացել ծեծի եւ տաժանակիր աշխատանքի հետեւանքով, անհետ կորածների թիվը 3572 է, բանտարկվել են 553 հայեր: Հայ բնակչության կրած միայն նյութական վնասների գումարը անցնում էր 1 միլիարդ ռուբլուց (1919թ.-ի դրությամբ), ինչը ժամանակի համար հսկայական գումար էր: 1918-1920թթ. կոտորածն ու թալանը, ռասայական ու կրոնական խտրական քաղաքականությունը շարունակվել են գրեթե Ադրբեջանի ողջ տարածքում:

Նման գործելաոճ ժառանգեց նաեւ Խորհրդային Ադրբեջանը: 1988-1991թթ.՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում, ապա 1992թ. Ադրբեջանի Հանրապետությունում պետության կողմից խրախուսվել են ցեղասպանական գործողություններ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, իսկ Հյուսիսային Ղարաբաղում, Նախիջեւանում եւ Ադրբեջանի մնացյալ տարածքում հայերի՝ ջարդերով ուղեկցվող տեղահանություններ: Այս գործողությունների հետեւանքով հարյուր հազարավոր հայեր հարկադրաբար լքեցին իրենց բնակավայրերը՝ ապաստան գտնելով Հայաստանում կամ արտերկրում:

Այս տարիների ընթացքում Ադրբեջանը չի կարողացել եւ անգամ չի փորձել քաղաքական կամք ցուցաբերել արդարացիորեն առերեսվելու իր հարյուր հազարավոր քաղաքացիների բռնի արտաքսման փաստին:

Այժմ Լեռնային Ղարաբաղի հայությունն է ենթարկվում միեւնույն դաժանություններին, ինչի միջով որ պատմական Գարդմանի, Շիրվանի եւ Նախիջեւանի հայությունը ստիպված է եղել անցնել 35 տարի առաջ: Համանման խնդիրներ փախստականների հետ կապված եւս կառաջանան, եթե միջազգային հեղինակավոր կազմակերպությունները, իրավապաշտպան կառույցները եւ ազդեցիկ եւ պատասխանատու երկրները չդիմեն գործնական ճնշման Ադրբեջանի նկատմամբ, չկանխեն Լեռնային Ղարաբաղի հայաթափումը, ինչպես որ եղավ Նախիջեւանի պարագայում: Ադրբեջանի այս գործողությունները հանդիսանում են միջազգային մի շարք կարեւորագույն իրավապաշտպան հռչակագրերի եւ կոնվենցիաների կոպտագույն խախտումներ, որոնք արժանի են մանրամասն քննության»:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԶԱԽԱՐՈՎԱՅԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Ռուսաստանը միշտ ուշադիր է եղել Հայաստանի հետ դաշնակցային հարաբերությունների նկատմամբ. այս մասին ամենշաբաթյա ճեպազրույցի ժամանակ նշել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով ԱԳՆ վերջին արձագանքը վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձին:

Դիվանագետին հարցրել են, թե արդյոք Երեւանը լսել է սեպտեմբերի 25-ի հայտարարության մեջ շարադրված Մոսկվայի ուղերձները: Զախարովան նշել է, որ հայկական կողմի հետ շփումները շարունակվում են տարբեր մակարդակներով: «Մենք ակնկալում ենք, որ մեր ազդանշանները կլսեն եւ պատշաճ կերպով կընկալվեն: Շատ առումներով սա մեր պատասխանն էր»,-ասաց նա՝ մեկնաբանելով ԱԳՆ հայտարարությունը:

Ռուսական կողմը կարծում է, որ փորձ է արվում ազատվել ներքին եւ արտաքին քաղաքականության մեջ ձախողումների պատասխանատվությունից՝ մեղքը բարդելով Մոսկվայի վրա:

ՊԱՏՐԱՍՏ Է ԸՆԴՈՒՆԵԼ

«ՌԻԱ Նովոստի» կայքի տեղեկություններով՝ Թուրքիան շահագրգռված է տարածաշրջանային «3+3» հարթակի ակտիվացմամբ եւ բազմիցս հայտնել է իր պատրաստակամությունն այս ձեւաչափով գագաթնաժողով անցկացնելու համար:

«3+3» հարթակը ենթադրում է համագործակցություն Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի եւ Հայաստանի միջեւ: 2022 թվականի դեկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցավ «3+3» խորհրդատվական տարածաշրջանային հարթակի առաջին հանդիպումը՝ Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի, Հայաստանի, Թուրքիայի փոխարտգործնախարարների եւ Իրանի արտգործնախարարության գլխավոր տնօրենի համանախագահությամբ:

Ավելի վաղ Վրաստանի ԱԳՆ-ն հաստատել էր, որ Թբիլիսին հրաժարվում է մասնակցել տարածաշրջանային խորհրդատվական մեխանիզմին: Երեքշաբթի օրը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Իրանի նախագահ Էբրահիմ Ռաիսին հեռախոսազրույցների ընթացքում հետաքրքրություն են հայտնել 3+3 խորհրդատվական տարածաշրջանային հարթակի աշխատանքի ակտիվացման հարցում:

«Լինելով այս նախագծի նախաձեռնողներից մեկը՝ մենք, իհարկե, հանդես ենք գալիս տարածաշրջանային համագործակցության օգտին: Համագործակցության այս ձեւաչափի հաջող օրինակը տեսնում ենք թյուրքալեզու երկրների օրինակով, երբ տարածաշրջանային երկրները, որոնք ունեն ընդհանուր արմատներ, միմյանց կապող տարրեր, համատեղ լուծում են խնդիրները, պլաններ են կազմում, մեծացնում են ապրանքաշրջանառությունը եւ այլն: Ուստի մենք միայն այս ձեւաչափի ակտիվացման կողմնակից ենք, բազմիցս հայտարարել ենք մեր պատրաստակամության մասին՝ ընդունելու նման հանդիպում ամենաբարձր մակարդակով»,- ընդգծել է գործակալության զրուցակիցը:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՏԱՐԵԼԻՑ

ՀՐԱՆՈԹԻՆ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԳԱԳԸ

2001 թվականին էր ծնվել Գագը՝ Գագիկ Աբրահամյանը:

Մայրիկը՝ տիկին Ռիտան, պատմում է, որ առողջական խնդիրների պատճառով մի փոքր ուշ էր ծնվել, բայց ոչ ուշացած, ու ամբողջ կյանքում էլ շտապող բնավորություն է ունեցել:

«Ամեն ինչ նախընտրում էր արագ անել, կարծես վախենում էր ուշանալ: Հիշում եմ՝ բուժքույրերը կես կատակ, կես լուրջ «արթունիկ» էին ասում Գագիս, քանի որ երբ մտնում էին սենյակ, տեսնում էին, որ Գագը, աչքերը բաց, այս ու այն կողմ է նայում, կարծես հսկում է բոլորին»:

Մոր խոսքով՝ հետագայում պատերազմի դաշտում հենց այդպես էլ եղավ.

«Հաշվարկի հրամանատար էր, հրանոթի վեց ամիս սերժանտական կուրսեր է անցկացրել Լուսակերտում, ապա տեղափոխվել Իջեւան, այնտեղ շատ քիչ ժամանակ ծառայելուց հետո դիմում է գրում, որ իրեն տեղափոխեն Արցախ:

Նա կարող էր Իջեւանում որեւէ խնդիր չունենալ, բայց Գագն այդ տղան չէր, որ որեւէ մեկի ստվերի, անվան տակ իրեն լավ զգար: Ամեն տեղ ինքն իր անունն էր ներկայացնում»:

Տիկին Ռիտան պատմում է, որ ինչ-ինչ պատճառներով տեղափոխությունն ուշանում է, եւ սեպտեմբերին սկսվում է պատերազմ.

«28 օր Գագը եղել է Արցախում, որի մասին ես միայն երրորդ օրն եմ իմացել: Մատաղիսում էր: Հիշում էր, որ հարմար պահ էր բռնացրել, որ կրակոց չլինի, զանգել էր, հարցնում էր, թե ինչպես եմ, ես ասացի, որ գիտեմ, թե որտեղ է, ասացի. «Գաս, գլուխդ ջարդելու եմ»: Միշտ մեկ րոպեից ավելի չէր խոսում, կարեւորը շեշտում էր, որ հաց կերել է, որովհետեւ գիտեր, որ ինձ համար դա չափազանց կարեւոր է: Ամեն անգամ զանգելիս ծիծաղում էր ու իր զրնգուն ծիծաղը մինչեւ հիմա ականջներումս է»:

Տիկին Ռիտան հիշում է, որ վերջին անգամ 19:01 է խոսել որդու հետ: Ասել է, որ լավ է, ու էլ զանգ չի եղել: Մայրը զգացել է, որ որդու հետ մի բան այն չէ, քանի որ ինչ էլ լիներ, Գագիկը կզանգեր մորը, իսկ այդ օրերի լռությունը ամեն բան ասում էր.

«29-ի առավոտյան արդեն իմացա, որ 5 զինվորներով սպային օգնելու համար խրամատից դուրս են եկել, եւ այդ պահին հարված է հասցվել արդեն նաեւ իրենց»:

Գագիկը դարպասապահ էր, խաղում էր «Փյունիկ» ֆուտբոլային ակումբում: Հասցնում էր նույնիսկ հանգստյան օրերին աշխատել:

Շատ երազանքներ ուներ, խելացի էր, կարդացած:

«Եռաբլուր»-ում Գագի կողքին իր հրանոթն է, քանի որ հրանոթի հաշվարկի հրամանատար է եղել, մայրը տղայի սիրելի հրանոթը իրեն մոտ է բերել, քանի որ մեծ սիրով ու նվիրումով էր վերաբերվում իր հրանոթին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ⇨ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ



Արցախյան պատերազմի հետեւանքով ավերվել է աշխարհի հնագույն քրիստոնեական համայնքներից մեկը: Աշխարհի հնագույն եկեղեցիներից շատերն այժմ գտնվում են պղծման կամ քանդման սպառնալիքի տակ: Այս մասին ասվում է Christian solidarity International (CSI) կազմակերպության հաղորդագրության մեջ:

«CSI-ի հավատարմությունը հայ ժողովրդին՝ առաջին քրիստոնյա ազգին, շարունակվում է: Մենք շտապ օգնություն ուղարկեցինք Հայաստանի հարավ Լեռնային Ղարաբաղից 120,000 փախստականների կարիքները հոգալու համար: Նրանց ճանապարհը դեպի վերաբնակեցում կլինի երկար ու դժվար: Այս կարիքները բավարարելու համար մենք աշխատում ենք Հայաստանում գործընկերների հետ:

Մենք բանակցում ենք նաեւ Հայաստանում Քերոլայն Քոքսի վերականգնողական կենտրոնի վերականգնման շուրջ: Ավելի քան 20 տարի կենտրոնը ժամանակակից օգնություն է ցուցաբերում 1988-1994, 2016 եւ 2020 թվականներին Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմների հետեւանքով հաշմանդամություն ունեցողներին եւ վիրավորներին: Տա Աստված, որ այս գործը շարունակվի:

Հայ ժողովրդին սպառնացող վտանգը չի անցել. Հայոց ցեղասպանությունը փուլ առ փուլ տեղի է ունեցել 1894 թվականից:

Իսլամական գերակայության եւ պանթյուրքիստական ազգայնականության գաղափարախոսությունները կարծես պահանջում են ոչնչացնել այս ազատ քրիստոնյա ժողովրդին: Թուրքիան եւ Ադրբեջանն արդեն սպառնալից քայլեր են անում Հայաստանի հարավի նկատմամբ, իսկ ադրբեջանական պետական քարոզչությունը Հայաստանի Հանրապետության մեծ մասը կամ ամբողջը հռչակել է «Արեւմտյան Ադրբեջան» եւ հայտարարել. «Մենք պետք է այնտեղ վերադառնանք»:

ԷԼ ԱՍԵԼԻՔ ՉԿԱ...

Հաղորդավարուհի, դերասանուհի Նազենի Հովհաննիսյանն «Ինստագրամ» սոցիալական ցանցի իր էջում նոր գրառում է կատարել:

«Ճանկողը դառնալու փոխարեն՝ նախընտրեցինք հա զոհը լինել..

Էլ ասելիք չկա...

Զոհը հա զբաղված է մի կերպ մազապուրծ լինելով (ժամանակավոր իհարկե): Ճանկողը միշտ ունի ընտրություն, բայց եւ միշտ գործում է արագ ու նպատակային:

....Լեռները թշնամուն տվեցինք ու մնացինք ջրափոսի մեջ սպասող», - գրել է Նազենին:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՐԱՍՏ Է ՕԳՆԵԼ

«Գազպրոմ Արմենիա» ընկերությունը հայտարարություն է տարածել, որում ասվում է. ««Գազպրոմ Արմենիա» ընկերությունում ձեւավորված օպերատիվ շտաբը այսօր քննարկեց մի շարք աջակցության ծրագրեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին օժանդակելու նպատակով:

Մասնավորապես, ընկերությունը պատրաստ է ՀՀ մարզերում կեցավայրի վարձակալության եւ կոմունալ ծախսերի փոխհատուցում տրամադրել տեղահանված 300 ընտանիքի՝ համաձայն Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից հաշվառված տվյալների:

Նախատեսվում է նաեւ հնարավորինս կարճ ժամկետներում կազմակերպել ընկերության հաշվեկշռում գտնվող «Կարին» պանսիոնատի շահագործումն ու ենթակառուցվածքների վերականգնումը՝ տեղահանված ընտանիքներին լրացուցիչ կացարաններով եւ կենցաղային անհրաժեշտ պայմաններով ապահովելու համար:

Զուգահեռ գույքագրվում են կարճաժամկետ աջակցության համար նախատեսվող այլ ռեսուրսներ՝ համակարգող մարմինների կողմից ներկայացվող կարիքներին համապատասխան»:

ՋԻՋՈՒՄ Է ԿԵՍ ՄԻԱՎՈՐՈՎ

Հայաստանը ներկայացնող շախմատիստները շարունակում են հաջող ելույթներն աշխարհի Մ20 տարեկանների առաջնությունում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկոյում շարունակվում է շախմատի աշխարհի Մ20 տարեկանների առաջնությունը: Կանանց պայքարում Մարիամ Մկրտչյանը 5 միավորով 2023 թվականի շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկան աղջիկների առաջնության առաջատարից կես միավոր է հետ:

Տղամարդկանց պայքարում Մամիկոն Ղարիբյանը դեռեւս վաստակել է 4,5 միավոր եւ մրցաշարային աղյուսակում 18-րդն է:

Աշխարհի 20 տարեկանների առաջնությանն, ընդհանուր առմամբ, մասնակցում են 231 շախմատիստներ: Այն անցկացվում է շվեյցարական մրցակարգով եւ բաղկացած է 11 տուրից: Մրցաշարը կեզրափակվի հոկտեմբերի 2-ին:

ԱՌԱՆՁՆԱՑՈՒՆԸ ԹԱԼԱՆԵԼ ԵՆ

Սեւիլիայում թալանել են իսպանացի պաշտպան Սերխիո Ռամոսի առանձնատունը. հաղորդում է իսպանական ABC-ն: Հանցագործությունը տեղի է ունեցել սեպտեմբերի 20-ին Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի առաջին տուրի «Սեւիլիա» - «Լանս» (1:1) հանդիպման ժամանակ:

Տանը եղել են «Սեւիլիայի» ֆուտբոլիստի երեխաները դայակի հետ: Նրանք չեն տուժել: Հանցագործները գողացել են թանկարժեք ոսկերչական զարդեր: Սերխիո Ռամոսն այս ամիս է ազատ գործակալի կարգավիճակում վերադարձել «Սեւիլիա»՝ կնքելով մեկ տարվա պայմանագիր:

● *Սեպտեմբերի 29-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Արալեզ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿՈՉՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Հանրապետության նախագահը ո՞ր դեպքերում եւ ի՞նչ կարգով է պարգեւատրում շքանշաններով եւ մեդալներով, շնորհում պատվավոր կոչումներ:

Հարություն Հովհաննիսյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքի 5.3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական պարգեւներ եւ պատվավոր կոչումներ Հանրապետության նախագահը շնորհում է՝ վարչապետի, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի եւ Բարձրագույն դատական խորհրդի նախագահների առաջարկությունների հիման վրա, եռօրյա ժամկետում: Հայաստանի Հանրապետության պետական պարգեւով պարգեւատրելու եւ պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ միջնորդությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը կարող է պետական պարգեւով պարգեւատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու վերաբերյալ հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնել միջնորդությամբ դիմող մարմին: Այն դեպքում, երբ միջնորդությամբ դիմող մարմինը չի ընդունում հանրապետության նախագահի առարկությունը, ապա հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ստորագրում է պետական պարգեւով պարգեւատրեու կամ պատվավոր կոչում շնորհելու վերաբերյալ հանրապետության նախագահի հրամանագիրը կամ եռօրյա ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ համաձայն՝ բարձրագույն դասային աստիճաններ հանրապետության նախագահը շնորհում է՝ վարչապետի, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի եւ Բարձրագույն դատական խորհրդի նախագահների առաջարկությունների հիման վրա, եռօրյա ժամկետում:

ԷՋԸ՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԱՌԱՔԱՆԻ

ՀԱՐՑ. Ի՞նչ պատասխանատվություն է կրում Հայ-Փոստը ԱՓԾ առաքանու հետ կապված խնդիրների առաջացման դեպքում:

Սիրուն Շմավոնյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀայՓոստն իր հաճախորդների առջեւ պատասխանատվություն է կրում.

- ԱՓԾ առաքանու կորստի դեպքում,
- ԱՓԾ առաքանու ներդրանքի մասնակի կորստի դեպքում,
- ԱՓԾ առաքանու ներդրանքի մասնակի վնասի դեպքում,
- ԱՓԾ առաքանու չհիմնավորված ետ վերադարձի դեպքում:

Փոստային կապի օպերատորները պատասխանատվություն չեն կրում մաքսային հայտարարագրերի համար՝ անկախ այն բանից, թե դրանք ինչպես են կազմվել ուղարկողի կողմից, ինչպես նաեւ մաքսային մարմինների կողմից մաքսային զննման ենթակա առաքանու ստուգման ժամանակ ընդունած որոշումների համար:

ՀայՓոստ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «ՀայՓոստ» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում չստացված եկամուտների եւ կողմնակի վնասների համար՝ անկախ դրանց ծագումից:

Ուղարկողները պատասխանատվություն են կրում ներդրանքի արգելված պարունակության եւ ոչ համապատասխան փաթեթավորման համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ՝ սեպտեմբերի 27-ին, Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինն իր հարգանքի տուրքն է մատուցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տասնամյակներ տեւող հակամարտության ընթացքում իրենց կյանքը զոհածներին:

«Մենք նաեւ մեր զորակցությունն ենք հայտնում անցյալ շաբաթվա ընթացքում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ռազմական գործողություններում զոհվածների ընտանիքներին ու վիրավորներին»,- նշվում է գրառման մեջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 5 +19 + 23
Կոտայքի լեռներ	+ 3 + 5 +19 + 23
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 +22 + 24
Գեղարքունիք	+ 3 + 7 +19 + 23
Լոռի	+ 3 + 8 +16 + 19
Տավուշ	+ 1 + 5 +18 + 21
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 +18 + 22
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 + 21 + 25

Արարատ	+11 + 13 +25 + 27
Արմավիր	+ 9 + 12 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 +16 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 10 + 13 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+13 + 14 +24 + 27
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 20
ԼՂՀ	+ 10 + 13 +22 + 25
Երեւան	+ 12 + 14 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.9.2023**
Հասցեն՝ Գերաքրքրության մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*